«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը տվյալ առարկայի դասավանդման գործընթացում

Առարկան՝ հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝Ա.Հովհաննիսյան

Ուսումնական հաստատություն՝Աբովյանի միջնակարգ դպրոց

Երևան ***2022***

Հետազոտական աշխատանքի վերաբերյալ հաշտվետվություն	
Հետազոտությունն իրականացնող ուսուցչի տվյալներ	
Անուն, ազգանուն, հայրանուն	Հովհաննիսյան Աիդա Ռոբերտի
Աշխատավայրը(դպրոցի լրիվ անվանումը)	Ք. Արտաշատ, Աբովյանի միջն. դպրոց
Մասնագիտություն	Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի
Հեռախոսահամար	077094956
Էլ. հասցե	Hovhannisyanaida0@gmail.com
Դասավանդվող առարկա(առարկաներ)	Հայոց լեզու և գրականություն
Դասարաններ	V- X
Հետազոտական աշխատանքի թեման	Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը տվյալ առարկայի դասավանդման գործընթացում
Հետազոտական աշխատանքի հարցը /պնդումը	Ի՞նչ է ուսումնական ծրագրի ինտեգրումը և որքանո՞վ է այն նպաստում կրթության որակի բարձրացմանը
Հետազոտական աշխատանքի խնդիրն ու նպատակը	Որ՞ն է ինտեգրման խնդիրը և որքանո՞վ է այն արդյունավետ ուսումնառությունն իրականացնելիս:
Հետազոտության ընթացքում օգտագործված մեթոդները	Խմբային աշխատանք , խաղերի կիրառում
Իրականացման ժամանակահատվածը	Սեպտեմբեր -Հոկտեմբեր
Մասնակիցները(դասարանը)	5- րդ դասարան
Գործընթացի համառոտ նկարագրությունը	Ժամանակակից հայ դպրոցն առանձնացված, մեկուսացված միավոր չէ և չէր կարող լինել այդպիսին: Այն իր ուսումնառության գործընթացը կազմակերպում է համաշխարհային դպրոցի փորձի ու նոր ձեռքբերումների հիման վրա: Ավանդական ուսուցման առաջավոր մեթոդների, մեթոդական եղանակների ու հնարների

կողքին գործածության ոլորտ են բերվում արդիականն ու ժամանակակիցը: Անհնար է պատկերացնել այդ գործընթացն առանց ուսուցչի ու նրա աշխատանքի վերակառուցման և կատարելագործման: Օրախնդիր հարց է, թե կրթական բարեփոխումների արդի պայմաններում ուսուցիչը որքանով է պատրաստ ուսուցման մարտավարությունների և նոր մեթոդների ընտրությանն ու կիրառությանը: Զարգացնող ուսուցման մանկավարժությունը պահանջում է ուսումնական տարբեր առարկաների՝ միմյանց մեջ ներթափանցման ուղիների մշակում: Այդ կերպ պայմաններ են ստեղծվում դասավանդման ընթացքում աշակերտների կողմից բազմաբաղադրիչ գիտելիքների ձեռքբերման համար:

Այսօրվա դպրոցում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչը առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ ուսուցման այս ձևը արդյունավետ չէ, և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն: Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) ծրագրերի հետևյալ տեսակները.



Որպես միավորող առանցք՝ հաճախ հանդես է գալիս որևէ թեմա, որն ընգրկում է մի քանի առարկա: 70-80-ական թվականներին ի հայտ եկան միջառարկայական կապերի և ուսուցման գործընթացում դրանց գործնական կիրառության յուրահատուկ դրսևորումներ՝ դասերի նորտիպեր, մասնավորապես՝ ինտեգրված դասեր, որոնք այլ կերպ կոչվեցին բինար, սինթետիկ, համատեղ դասեր:

Ինտեգրված դասերը ժամանակակից ուսուցման մեթոդների նորույթներից մեկն են: Այս տիպի դասերը կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ: Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը:

Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը: Սակայն ինտեգրված դասեր ուսուցիչներն այդքան էլ հաճախ չեն կիրառում: Դրանք հիմնականում կիրառվում են հետևյալ դեպքերում.

1. երբ հայտնաբերվում են միևնույն նյութի կրկնությունը տարբեր ուսումնական առարկաներում և դասագրքերում,

	2. թեմայի ուսումնասիրության ժամանակի խնայողության դեպքում՝ ցանկանալով օգտվել մեկից ավելի առարկաների պատրաստի բովանդակությունից, 3. այնպիսի ընդհանրացված հասկացությունների (շարժում, ժամանակ, զարգացում, մեծություն և այլն), օրենքների, սկզբունքների ուսումնասիրության ժամանակ, որոնք ներառում են մարդկային կյանքի և գործունեության ամենատարբեր ասպեկտներ, 4. երբ ուսումնասիրվող նյութը դուրս է գալիս ուսուցանվող առարկայի ծրագրի շրջանակներից, 5. առարկայի դասավանդման ժամանակ պրոբլեմադիր և զարգացնող ուսուցում իրականացնելու ժամանակ: Իհարկե, կան նաև ինտեգրված դասերի կիրառման այլ դրդապատճառներ: Մինչ ինտեգրված դաս անցկացնելը ուսուցիչը նախ դիմում է իր այն կոլեգային, ում դասավանդած առարկան պետք է ինտեգրվի իր առարկայի հետ: Երկու ուսուցիչներ պարզում և որոշում են իրենց առարկաների համատեղ հետաքրքրությունը: Ինտեգրված դասի ամենախոցելի տեղը ուսուցիչների փոխգործունեության ճիշտ կազմակերպումն է. նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության ու ընթացքի արդյունավետ ապահովումը: Ընդ որում՝ նրանց փոխհարաբերությունները կարող են տարբեր լինել. յուրաքանչյուրն ունի հավասար մասնակցության իրավունք կամ նրանցից մեկը հանդես է գալիս որպես առաջատար, իսկ մյուսը՝ խորհրդատու, կամ ամբողջ դասը կարող է վարել ուսուցիչներից մեկը, իսկ մյուսները պարզապես խաղան ակտիվ հյուրի դեր: Տարբեր է նաև ինտեգրված դասերի տևողությունը: Բայց առավելաբար օգտագործում են երկու կամ երեք դասաժամ՝ միավորված մեկ դասի մեջ: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, խորացնել հասկացողությունը, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը: Դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն,

	ուսուցման մեթոդ և միջոց: Օրինակ՝ երբ վերցնում են բովանդակությունը, ապա ինտեգրման համար առանձնանցվում է բովանդակության ցանկացած բաղադրիչ՝ հասկացություն, օրենք, սահմանում, փաստ և այլն: Կարելի է ինտեգրել նաև բովանդակային այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են մտավոր և գործնական կարողություններն ու հմտությունները: Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Համակարգ ձևավորելը դառնում է դասի կազմակերպման կարևորագույն մասը, քանի որ հիմք է հանդիսանում հետագայում մշակվող դասավանդման մեթոդիկայի և նրա կառուցման տեխնոլոգիայի համար: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ: Այս նախապատրաստական գործունեության ընթացքում ուսուցիչը որոշում է. 1. ինտեգրված դասի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակը, 2. համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը, 3. ինտեգրման ձևը, 4. միավորվող նյութերի միջև կապերի բնույթը, 5.նյութի հաջորդականության կառուցվածքը, 6. նյութի ներկայացման միջոցները, 7. դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև, 8. տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները : Պարզ և հստակ ձևակերպելով դասի նպատակը՝ ուսուցիչը հավաքում է մեկ դասում միավորվող ուսումնական նյութը, այսինքն՝ որոշում է ինտեգրման բաղադրիչները: Դա արվում է համագործակցող ուսուցչի հետ: Այս փուլում հավաքվում են միայն ուսումնական թեմաներն ու դրանց առանձին մասերը, որոնք պետք է կազմեն ինտեգրման բովանդակային հիմքը: Այստեղ դրսևորվում է նաև ինտեգրմանը մասնակցող ուսուցիչների փոխհամաձայնությունը: Ապա երկու ուսուցիչ սկսում են վերլուծել ընտրված նյութը և բաժանում են այն երկու մասի՝ հիմնական և օժանդակ: Հիմնական նյութը դառնում է դասի՝ համակարգ ձևավորող բաղադրիչը: Որպես համակարգ ձևավորող բաղադրիչ՝

	կարող է հանդես գալ ինտեգրվող բովանդակության միայն այն հատվածը, որը որոշվում է առաջադրանքի նպատակով: Որպես այդպիսի բաղադրիչներ՝ կարող են լինել առանձին հասկացություններ, օրենքներ, մտքեր, ուսուցման մեթոդներ և միջոցներ: Համակարգ ձևավորող բաղադրիչի առանձնացումը կարևորվում է նրանով, որ հենց դրանով է որոշվում ինտեգրվող նյութը, որպեսզի այն մատուցվի ամբողջովին, որպեսզի պարզ բացատրվեն կամ պարզվեն դրա ի հայտ գալու պատճառները: Այսպիսով, ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից: Կախված նրանից, թե ինչ ձևով է տեղի ունենում ինտեգրումը : Պլանի մեջ հստակորեն ներկայացվում է քայլերի հաջորդականությունը, պարզորոշ ընդգծվում են առաջատար և օժանդակ առարկաները: Ինտեգրված դասն արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը դասի ճիշտ պլանավորումն է, որի մեջ, ըստ չափորոշչի եռամակարդակ պահանջների, պետք է ներառվի նաև գնահատման համակարգը: Ահա թե ինչու առարկայական ծրագրերը կազմելիս և նրանցում հանրակրթական ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագիտությունների ուսուցիչների կողմից կատարված փոփոխությունների ժամանակ հաշվի են առնվում տարբեր առարկաների ներքին ընդհանուր ու տրամաբանական կապերը: Այսպիսով, կրթական ծրագրերի բովանդակությունը կազմող տարբեր առարկաների իմաստն այն է, որ այդ բովանդակությունն արտացոլում է ամբողջական իրականությունն իր տարբեր կողմերով՝ փոխկապակցված ձևերով, իսկ միջառարկայական կապերը լայն հնարավորություն են ստեղծում ուսուցման նկատմամբ դրսևորելու համընդհանուր մոտեցում՝ սովորողների համար հիմք հանդիսանալով իրականության նկատմամբ միասնական հայացքների ձևավորմանը:

Յան Ամոս Կոմենսկին դիդակտիկայի սկզբունքների դասակարգման մեջ առանձնացնում էր համակարգվածության և հաջորդականության սկզբունքը, որի տակ հասկանում էր դպրոցական առարկաների միջև փոխադարձ կապերի ստեղծումը: Ընդ որում՝ այնպիսի կապերի, որոնց միջոցով այդ առարկաները նպաստեն մեկը մյուսի ըմբռնմանն ու յուրացմանը: Մեծ մանկավարժը նկատում է, որ ոչ ոքի հնարավոր չէ կրթություն տալ մի որևէ մասնակի գիտության միջոցով՝ անկախ մնացած գիտություններից:

Դպրոցի տարրական դասարաններում միշտ էլ մեթոդական հիմնախնդիր է եղել միջառարկայական կապերի կիրառումը:: Այն շատ դեպքերում կրել է մեխանիկական բնույթ: Սակայն այլ են նորագույն մանկավարժական մոտեցումների ու ծրագրերի պահանջները: Տարրական դպրոցում ընթերցանության դասերի ընթացքում պահանջվում է նյութից բխող ինտեգրում նույն դասարաններում ուսումնասիրվող այլ առարկաների միջև՝ գրական ընթերցանություն-հայոց լեզու, գրական ընթերցանություն-երաժշտություն, նկարչություն, մայրենի լեզուաշխատանքի ուսուցում, մաթեմատիկա և այլն: Այս ծրագրի իրականացումը պահանջում է և՛ գիտելիքներ, և՛ տեղեկատվություն, և՛ ստեղծագործական միտք ու վարպետություն: Ինտեգրված դասը ժամանակակից մեթոդիկայի նորույթներից մեկն է: Ինտեգրված դասի միջոցով արտահայտվում են միջառարկայական կապերը:

Այն կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ: Ուշագրավ է ինտեգրումը ընթերցանության և քերականության միջև:

Տարրական դասարանների մայրենիի դասագրքերը կազմված են հենց ինտեգրման սկզբունքով, որի պահանջն է՝ իրականացնել հայոց լեզվի գործնական ուսուցում ընթերցանության նյութերի միջոցով: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների միջառարկայական կապերի բովանդակային և տրամաբանական մոտեցում:

Ժամանակակից մանկավարժագիտության մեջ ինտեգրումը սովորողի կողմից կոնկրետ որևէ երևույթի կամ բնագավառի ամբողջական ընկալման ձևավորումն է, որն իրականացվում է մասերը մի ամբողջի մեջ միավորելու և շրջապատի ու բնության երևույթների վերաբերյալ համապարփակ ու ամբողջական պատկերացում ձևավորելու ճանապարհով:



Ժամանակակից մանկավարժության մեջ ինտեգրված ուսուցումը ներկայացվում է նոր դիտարկումներով: Այն իր բնույթով զարգացնող է, բովանդակությամբ՝ բազմաբաղադրատարր, որը ներառում է թե՛ զարգացման սահմանափակ հնարավորություններ ունեցող սովորողներին, թե՛ միջառարկայական կապերի կիրառումը, թե՛ բազմահամակազմային դասարաններում իրականացվող գործընթացները: Ինչպես նշում է Ե. Ա.

	Եկժանովան, «Ինտեգրված ուսուցումը, հիմնվելով հատուկ և ընդհանուր կրթության սկզբունքների վրա, պետք է ունենա զարգացնող, դաստիարակող բնութագիր, որը ենթադրում է սովորողների բարոյական գաղափարների, վարքի համարժեք ձևերի մշակում՝ բոլոր մասնակիցների ներառմամբ կրթական գործընթացում»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ, ըստ. Վ. Վ. Կրաևսկու, դպրոցականների առաջադիմության անկումը գլոբալ խնդիր է, որի լուծման համար անհրաժեշտ է գիտական մոտեցում, ընդ որում՝ ոչ միայն մանկավարժական, պետք է նշենք, որ ավելի է կարևորվում ինտեգրված ուսուցման կիրառումը՝ որպես կրթության որակի բարձրացման գործոն: Համաձայնելով նաև Վ. Վ. Կրաևսկու այն տեսակետին, ըստ որի՝ այս խնդրի լուծումը բազմաշերտ է և պահանջում է տարբեր մասնագետների՝ մանկավարժների, սոցիոլոգների, հոգեբանների միջամտությունը, անդրադառնանք զարգացնող ուսուցման նշանակությանը ուսուցման արդյունավետության բարձրացման գործընթացում: Զարգացնող ուսուցման մանկավարժությունը պահանջում է ուսումնական տարբեր առարկաների՝ միմյանց մեջ ներթափանցման ուղիների մշակում, որոնցով պայմաններ կստեղծվեն դասավանդման ընթացքում աշակերտների կողմից բազմաբաղադրիչ գիտելիքների ձեռքբերման համար: Ինտեգրված ուսուցումը հիմնվելով միջառարակայական կապերի կիրառման վրա, հանդես է գալիս որպես սովորողների պոտենցիալ հնարավորությունները զարգացնող ուսուցում՝ նպաստելով նրանց բնական ճանաչողության դրդապատճառների խթանմանը: Մայրենիի միասնացված յուրաքանչյուր դասի ընթացքում ուսուցիչը պիտի ապահովի գիտելիքի ինտեգրման բազմաթիվ դրվագներ: Այդ ինտեգրումը կարող է հանդես գալ ինչպես ներառարկայական, այնպես էլ միջառարկայական կապերի դրսևորմամբ: Վերջինիս ապահովումը լայն հնարավորություն է բացում աշակերտի անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար, քանի որ ժամանակակից պատկերացմամբ դպրոցը երեխային ոչ միայն պետք է սովորեցնի մտածել և գրագետ խոսել, այլև իմացածը կյանքում կիրառել: Մայրենիի միասնացված դասընթացի միջոցով խնդիր է դրվում ապահովելու հայոց լեզվի ուսուցման՝ առարկայական չափորոշչով սահմանված նպատակներից մեկը, այն է՝ «սովորողի մեջ ժամանակակից գրական հայերենի նորմային համապատասխան խոսք կառուցելու մշակումը, իր խոսքը վերահսկելու, բարբառային, ժարգոնային արտահայտություններից մաքրելու, մայրենի լեզվով ամենատարբեր բնույթի տեքստեր և գրականություն կարդալու և ինքնուրույն հասկանալու կարողությունների զարգացումը»: Տարրական դպրոցում լեզվական քերականական գիտելիքների

	ուսուցումն իրականացվում է գործնական եղանակով: Գիտական սահմանումներ տրվում են այն չափով, որքանով գործնական վարժությունների հիման վրա աշակերտները հասնում են ընդհանրացումների ու եզրակացությունների: Ուսուցիչն օգնում է նրանց՝ եզրույթների ճանաչման և խոսքի մեջ դրանց կիրառման օրինաչափությունների գործում: Լեզվի գործնական ուսուցումը կատարվում է ընթերցանության համար նախատեսված՝ բարբառայնությունից զուրկ, գրական բարձր հայերենով բնագրերի հենքով, որոնք իրենց մեջ պարունակում են անհրաժեշտ քերականական նյութի օրինակներ: Ուսուցիչը չպետք է անտեսի այն հանգամանքը, որ մեր օրերում աշակերտ-գեղարվեստական գիրք կապի խզման (կամ նվազագույնի հասնելու) ցավալի երևույթի պատճառով զգալի անջրպետ է գոյացել գրական և խոսակցական լեզվի միջև: Աշակերտները չեն տիրապետում քերականորեն ճիշտ խոսք կառուցելու պահանջներին: Նրանց խոսքի մեջ իշխող է դարձել ժարգոնային, բարբառային, օտարաբան բառերի օգտագործումը: Այս առումով էլ, սկսած տարրական դասարաններից, իրականացվում է լեզվի գործնական ուսուցումը: Լեզվական տարբեր իրողությունների ուսումնասիրման նյութ է ծառայում գրական բնագիրը: Դրա մեջ դրսևորվում և փոխադարձ կապերի մեջ երևում են լեզվական տարրերն ու մակարդակները, քերականական առանձնահատկություններն ու օրինաչափությունները: Այսինքն՝ կազմակերպվում է ինտեգրված ուսուցում, որի ընթացքում միջառարկայական կապերի հանգույցում հանդես են գալիս միմյանց հետ սերտորեն կապակցված երկու առարկաներ՝ հայոց լեզու և գրական ընթերցանություն]: Նկատելի է, որ գործող դասագրքերում երբեմն քերականական նյութը հրամցվում է ոչ տեղին, այսինքն՝ ընթերցանության համար նախատեսված այնպիսի բնագրի կողքին, որի մեջ չկան համապատասխան օրինակներ: Ուսուցիչն այս դեպքում պետք է ճկուն կերպով մայրենի լեզվի գործնական ուսուցում իրականացնի այն նյութերի հենքով, որոնցում դրա պայմանները կան: Օրինակ, 3-րդ դասարանում «Կոչական» թեման ոչ մի կապ չունի գրական նյութի հետ: Այնինչ, կան բնագրեր, որոնք հարուստ են կոչականներով: Հենց այս նյութերի ուսուցման ընթացքում էլ աշակերտները գործնական աշխատանք են տանում կոչականի վերաբերյալ՝ ճանաչելով կոչականը խոսքի մեջ, դրա շարադասությունը, կետադրությունը և կազմության ձևերը: Օրինակ, «Բաղդադի խալիֆը և իմաստուն ծերունին» նյութի ուսուցման ընթացքում ընթերցանության ու հայոց լեզվի միջև միջառարկայական կապ կարելի է ստեղծել հենց կոչականի շուրջ: Հարցաշար կարելի է կազմել հետևյալ բովանդակությամբ. 1. Ովքե՞ր են հանդես գալիս այս պատմվածքում: /պատասխան՝ Բաղդադի Խալիֆն ու մի ծերունի/ 2. Ինչպե՞ս է կառուցված պատմվածքը: (Պատասխանն ընտրվում է տրված

	տարբերակներից). ա/ պատմողական ձևով, բ/ զրույցի, երկխոսության ձևով, գ/ նկարագրության ձևով: Ընտրվում է բ/ տարբերակը, որի շուրջ համառոտ ընթացիկ զրույց է կազմակերպվում՝ «Ինչ է նշանակում զրույց, երկխոսություն» թեմայով: Աշակերտները հանգում են այն եզրակացության, որ զրույցը երկու և ավելի մարդկանց միջև տեղի ունեցող խոսակցություն է: Այդ ընթացքում նրանք միմյանց դիմում են՝ անունը , կոչումը կամ հարգալից որևէ դիմելաձև /ծերուկ, երիտասարդ, տիկին և այլն/ նշելով: Դա հարգալից վերաբերմունքի դրսևորում է: Մեկի հետ խոսելիս պետք է նրան դիմել, կոչել անունով կամ քաղաքավարական որևէ այլ դիմելաձևով: Անվանել և կոչել հոմանիշային բառերից էլ կոչական բառն է ծագել /կոչ+ական/: Այնուհետև ուսուցչի կողմնորոշմամբ՝ աշակերտները ճանաչում են կոչական հասկացությունը, որի դրսևորումներն են ծերուկ և թագավոր բառերը: Գիտելիքներն ամրապնդելու նպատակով ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին՝ գտնել կոչականի գործածության այլ դեպքեր: Հաջորդ առաջադրանքի բովանդակությունը տարբերվում է նախորդներից. կարդալ այն երկխոսությունները, որոնց մեջ բացակայում է կոչականը, և ինքնուրույն ավելացնել համապատասխան կոչական բառը (աշխատանքային այս ձևը կազմակերպվում է զույգերով): Առաջադրանք 3. Զույգեր կազմեք, հորինեք 1-2 նախադասությունից կազմված զրույց: Դիմեք միմյանց՝ գործածելով կոչականներ: Երբ աշակերտները հմտանում են կոչականի կիրառության մեջ, ուսուցիչն անցնում է աշխատանքի հաջորդ փուլին՝ կոչականի կետադրությանը: Աշակերտները նկատում են, որ ծերուկ բառի վերջին վանկի ու ձայնավորի վրա դրված է շեշտ, և եզրակացնում են. կոչականի վրա դրվում է շեշտ: Ուսուցիչն աշակերտների ուշադրությունը բևեռում է բառակապակցությունների վրա: Կազմակերպվում է խմբային աշխատանք՝ հետևյալ հարցադրումներով. ա/ Այդ կապակցություններում ո՞ր բառերն են կոչականները: բ/ Եթե կոչականն իր վրա շեշտ է ընդունում, ինչո՞ւ շեշտված չեն կոչականները: գ/ Ո՞ր բառերն են շեշտված, և ի՞նչ կապ ունեն դրանք կոչականների հետ: Տրվում է չորս րոպե ժամանակ: Պատասխանների արդյունքում վերջնական ձևակերպում է ստանում հետևյալ միտքը. «Եթե կոչականն ունի լրացում, ապա շեշտը դրվում է այդ լրացման վրա»: Հաջորդ ժամերի ընթացքում ամրապնդվում են գիտելիքները, և աշակերտները ձեռք են բերում նոր տեղեկություններ. ա/ Կոչականը հիմնականում գործածվում է երկխոսությունների դեպքում կամ ուրիշի ուղղակի խոսքի մեջ: բ/ Կոչականը կարող է դրվել խոսքի սկզբում: Կրկնողական վարժությունների միջոցով ձեռք բերված տեղեկությունները վերածվում են հմտությունների, և ուսուցիչն արդեն հանձնարարում է նոր աշխատանք՝ գրել կապակցված տեքստ

	կոչականների գործածությամբ: Կարելի է տալ առաջին երկու նախադասությունը՝ պահանջելով շարունակել, կամ վերջին նախադասությունները՝ պահանջելով գրել սկիզբը: Աշխատանքային այս ձևով հստակ ընդգծվում է մանկավարժական այն ռազմավարությունը, ըստ որի՝ գիտելիքներից բացի սովորողի մեջ անհրաժեշտ է զարգացնել դրանք կիրառելու իրական կարողություններ ու հմտություններ, ընդգրկել նրան ճանաչողական գործունեության մեջ և ուղղորդել նրա ներքին ուժերն ու հնարավորությունները: Ինտեգրված դասի ընթացքում աշակերտների որոնողական և համագործակցային աշխատանքային ձևերն ավելի ակտիվ բնույթ են կրում: Ինտեգրված առարկաների և դրանց փաստացի նյութի շուրջ կատարվող աշխատանքները բխում են բնագրի բովանդակությունից, թեմայից, լեզվից: Հասկանալի է, որ տարրական դասարանների աշակերտները լիովին ի վիճակի չեն լինի գտնելու հարցաշարերում առաջադրված բոլոր հարցերի պատասխանները: Այս դեպքում համագործակցված աշխատանքը կրելու է աշակերտ ծնող, աշակերտ տեղեկատվական, գիրք, աշակերտ ուսուցիչ, աշակերտ աշակերտ զույգերով կամ խմբային կիրառության ձևը: Միջառարկայական կապերի ինտեգրումը մայրենի լեզվի ուսուցչին հնարավորություն է ընձեռում լրացնել աշակերտների գիտելիքների պակասը՝ պատմությունից, հայրենի բնությունից, երաժշտությունից ու նկարչությունից: Ուսուցման այս ռազմավարությունը նպաստում է աշակերտեների բազմաբնույթ մտածողության զարգացմանը: Նրանց առջև լայն հնարավություն է ստեղծվում առարկաների միջև առկա կապերի ցուցադրմամբ հաղորդակցվել գիտության ու կյանքի տարբեր բնագավառների զանազան երևույթներին, պատճառահետևանքային կապերին և օրինաչափություններին: Այդ ճանապարհով նրանք աստիճանաբար վարժվում են ինքնուրույն աշխատանքի, որը կարևոր ուղենիշ է դառնալու՝ նրանց հետագա ամբողջ կյանքի ընթացքում շարունակական կրթության խոչընդոտները հաղթահարելու, ինքնուրույն ուսուցման, կատարելագործման ու բազնակողմանի զարգացման առումով: Քիչ չէ այն ուսուցիչների թիվը, ովքեր գերադասում են աշխատել միայն ավանդական մեթոդներով: Նրանք դժվարությամբ են ընդունում բարեփոխումներով պայմանավորված նորը: Ոչ ոք չի կարող հերքել, որ մեծ են մեր ուսուցչապետերը՝ Մ. Մաշտոցից մինչև Խ. Աբովյան, Ղ. Աղայան, Լ. Շանթ, Մանդինյան, Հ. Օշական, Ա. Տեր Գրիգորյան և ուրիշներ, և նրանց ավանդած մեթոդները, հիրավի, ընդունելի են: Սակայն այդքան հզոր թիկունք ունենալը չի նշանակում առաջ չնայել: Դարձյալ վկայակոչենք Պ. Սևակին.

	«Ժամանակն է, որ մենք հասկանանք և մեկընդմիշտ հիշենք, որ Թումանյանն ու Իսահակյանը մեր թիկունքն են, մեր մեջքը, մեր հետևապահ զորագունդը»: Ինտեգրացված դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի հոգեկան գործունեության մեջ: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգնածությունը, ձանձրույթը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից, վերանում է, այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն և աշխուժություն: Ինտեգրված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու հայտնագործություններով, առաջ է գալիս ստեղծականությունը, հետազոտական նաև նախագծային աշխատանքը: Բացի վերը նշվածից, այս տեսակ դասերը ստեղծագործ ուսուցչին հնարավորություն են տալիս հասնել նոր մակարդակի, բացահայտել իր համար տեղեկություններ, մտնել նոր փուլ, իսկ սովորողին՝ զարգացնել ստեղծագործական մտածողությունը, ինքնակրթվելու հնարավորություն ստեղծել: Ընդ որում, ուսումնական նյութերը պետք է լինեն մատչելի, ոչ ծանրաբեռնված, դասարանում ուսումնական գործընթացը պետք է համապատասանի սահմանային ծավալին: Սովորողը պետք է ստանա այնքան տեղեկություն, որ չխճճվի նյութերում: Ինտեգրված ուսուցմամբ դասապրոցեսի իրականացումը բնութագրվում է մի շարք օրինաչափություններով, որոնցից մասնավորապես առանձնացնենք հետևյալները՝ • դասապրոցեսի ընթացքը ըստ մանկավարժի հեղինակային մտածողությամբ իրականացված սցենարի, • դասապրոցեսի բոլոր փուլերի և բաղադրիչների տրամաբանական կապվածությունը և նրա ծավալումը առանցքային թեմայի շուրջ, • դասի համար ընտրված դիդակտիկ նյութի շղթայում դասագրքային և լրացուցիչ գրականության հասկացությունների ու գաղափարների համադրումը, • դասապրոցեսի անցկացումը ինչպես մեկ, այնպես էլ ավելի ուսուցիչների մասնակցությամբ, որոնք կարող են հանդես գալ որպես խորհրդատումանկավարժներ: Արդյունավետ դասերը նաև լեզվական կողմնորոշում են, որոնք սովորաբար ունեն համեմատական բնույթ, օրինակ, որոշակի առումով, հայերենի քերականություն և անգլերեն լեզու: Միջնակարգ կրթության ժամանակակից կողմնորոշումը սերտորեն

	կապված է համակարգչային և ժամանակից տեխնոլոգիաներին: Այնպես որ, դասերը, միանշանակ, ինտեգրված են համակարգչային գիտությանը, որով ամրապնդում են նոր գիտելիքները անհատական համակարգչային ուսուցման համար: Ժամանակակից սովորողները մեծ հաճույքով են աշխատում համակարգչով, որն էլ դասը դարձնում է ավելի հետաքրքրաշարժ: Բազմամշակութային ու բազմալեզու աշխարհում ապրելու համար անհրաժեշտ է սովորողների մեջ ձևավորել այնպիսի արժեքային որակներ, ինչպիսիք են համակեցությունը, հանդուրժողականությունը, համագործակցությունը: Այս որակները պետք է բխեն սովորողի ապրած իրականությունից և չհակասեն դպրոցում ստացած գիտելիք-հմտություն/կարողություն-արժեք եռամիասնությանը: Ողջ աշխարհում տեղի ունեցող կրթական ոլորտի փոփոխությունները սովորողներից պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու, ճկուն լինելու հմտություններ: Այդ հմտություններին հասնելու համար նեղ, առարկայական գիտելիքները բավարար չեն կարող լինել, ուստի արդիական պահանջ է առաջանում մշակել նոր և բազմակողմանի մոտեցումներ, ինչպես նաև կիրառել բազմազան ու հետաքրքիր մեթոդներ: Սակայն այդ մեթոդները պետք է համապատասխանեցվեն հասարակական կյանքի առաջընթացին և ուսուցման ժամանակակից պահանջներին՝ կատարելագործելով դրանք: Կյանք-իրականություն-կրթական հաստատություն կապն ամրապնդելը այսօր դարձել է առաջնային խնդիր: Սովորողները արդի իրականության մեջ կարծես իրենք են թելադրում շարունակաբար նորարարական ու թարմ մոտեցումներով անցկացնել դասը, որպեսզի այն չլինի ձանձրալի և միօրինակ: Այդպիսի նորարարական մոտեցումներով հագեցած ուսումնառության լավագույն օրինակներից է ինտեգրված դասը, որը ժամանակակից մեթոդիկայի նորույթներից մեկն է և լայն

տարածում է գտել աշխարհում։

Մեր նպատակն է պարզել, թե որ՞ն է ինտեգրման խնդիրը և որքանո՞վ է այն արդյունավետ ուսումնառությունն իրականացնելիս։

Ինտեգրված դասի միջոցով ավելի պարզ և հստակ են արտահայտվում միջառարկայական կապերը։ Ուսումնական ծրագրի ինտեգրումը վերացնում է դասաժամերի ու առարկաների միջև եղած սահմանափակումները՝ հնարավորություն ընձեռնելով սովորողներին հետաքրքրությամբ ներգրավել դասապրոցեսին, ցուցաբերել ակտիվ մտածողություն և ստեղծարարություն։

«Ինտեգրված դասը թույլ է տալիս ավելի արդյունավետ օգտագործել աշխատանքային ժամը՝ վերացնելով կրկնությունները, խորացնել նյութի ուսումնասիրությունը՝ առանց լրացուցիչ ժամանակային ծախսերի: Ինտեգրված դասի ընթացքում երկու կամ ավելի ակադեմիական առարկաների դիդակտիկ խնդիրները լուծվում են միաժամանակ[1]»:

Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդումը ստեղծում է արհեստական պատնեշներ և սովորողները աշխարհի մասին ունենում են ոչ ամբողջական, այլ մասնատված պատկերացումներ։ Ուսուցման այդ ձևը արդեն իսկ արդյունավետ չէ, ուստի, որպես լուծում, առաջարկվում է ինտեգրված ուսուցումը, որի հիմնական խնդիրն է ձևավորել միասնական մոտեցում երևույթի ընկալման, գիտակցման ու յուրացման հանդեպ։

Երբ ուսումնական ծրագիրը տեղափոխում ենք մարդկային կենսափորձի պայմաններ, ակնհայտ է դառնում, որ այն նոր

[1] https://historyancient.ru/hy/the-chechen-war/pochemu-byli-vvedeny-integrirovannye-uroki-integrirovannye/

	իմաստ է ստանում: Եթե աշակերտը դպրոցում ստանում է կտրված գիտելիքներ, նա չի կարողանում իրական կյանքում հանդիպող խնդիրները նույնացնել դասարանում հանդիպածների հետ: Իսկ ինտեգրված դասը սովորողի մոտ ձևավորում է այնպիսի աշխարհայացք, որն ի վիճակի է կապակցել իրականության տարբեր երևույթները, նկատել ժամանակի, տարածության, գործողությունների, հասկացությունների միջև կապը, զարգացնել հմտություններ, հասկանալ դրանց ազդեցությունները միմյանց վրա, ձևավորել վերաբերմունք և արժեհամակարգ: Հետազոտության նպատակն է ցույց տալ, որ ծրագրի ինտեգրումը Ա) ծառայում է սովորողների գիտելիքների հարստացմանը, որտեղ գիտելիքները կառուցվում են համատեղ՝ ուսուցիչների և աշակերտների կողմից: Բ) նպաստում է հետազոտական հմտությունների զարգացմանը (Աշակերտները գործուն կառուցողներն ու բացահայտողներն են): Գ) նպաստում է անձնային հարաբերությունների զարգացմանը, ինչպես աշակերտների, այնպես էլ ուսուցիչների և աշակերտների միջև: Ինտեգրված ուսուցման վերջնարդյունքում ակնկալում ենք ձեռք բերել վարպետություն, փորձառություն, որը հնարավորություն կտա հասնելու նոր որակական մակարդակի, իսկ սովորողներին ուղղորդել՝ զարգացնելու հմտությունները, ունակությունները, քննադատական վերլուծությունն ու ստեղծագործական մտածողությունը: Ի՞նչ է ուսումնական ծրագրի ինտեգրումը և որքանո՞վ է այն նպաստում կրթության որակի բարձրացմանը

Ինտեգրված դասերը հանրային կրթության ձևերից է, որն իր մեջ է միավորում մի քանի առարկաների ուսումնական նյութերը միաժամանակյա ուսուցման ժամանակ։ Այդպիսի դասերի ժամանակ ուսումնական նյութերը և՛ իմաստով, և՛ ձևով պետք է փոխադարձ հարաբերության մեջ գտնվեն և լրացնեն իրար՝ կազմելով մեկ ամբողջություն։

Ինտեգրված ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից ստացած գիտելիքները հենվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից ձեռք բերված գիտելիքների վրա։ Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն։

«Ինտեգրված ուսուցումը ներառում է ավանդական առանձին առարկաների համատեղումը, ինչը հնարավորություն է տալիս նյութի ճիշտ և հեշտ հասկանալուն[2]»:

Ինտեգրված ուսումնական ծրագրեր կազմելիս մանկավարժները պետք է պատասխանեն կրթությանը վերաբերող երեք կարևոր հարցերի, որոնց պատասխանները մեզ տանում են դեպի գիտենալ-անել-լինել եռամիասնության ստեղծմանը.

- Ի՞նչն է այն ամենակարևորը, որ աշակերտները պետք է գիտենան։
- Ի՞նչն է այն ամենակարևորը, որ աշակերտները պետք է կարողանան անել։
- Ինչպիսի՞ անձնավորություն ենք մենք ցանկանում, որ աշակերտները լինեն:

Այսպիսի դասեր իրականացնելու համար պահանջվում են նախապատրաստական լուրջ ջանքեր և ճիշտ մոտեցումներ։

[2] https://hy.wikipedia.org/wiki/%D4%BB%D5%B6%D5%BF%D5%A5%D5%A3%D6%80%D5%BE%D5%A1%D5%AE_%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

	Հարկավոր է հետևողական գտնվել ուսուցիչների փոխգործունեության կազմակերպման գործում, պլանավորել գործողությունների հաջորդականության ընթացք՝ հաշվարկելով օգտագործվող ժամանակի արդյունավետությունը և կազմելով դրան համապատասխան օրվա դասի պլան, որը պետք է լինի համատեղ աշխատանքի արդյունք։ Սովորաբար առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հարստացմանը։ Սակայն սա չի պարտադրում քարացած մոտեցում։ Յուրաքանչյուրն ունի հավասար մասնակցության իրավունք։ Սովորաբար առաջատար առարկայի ուսուցիչը հանդես է գալիս որպես առաջատար, իսկ մյուսը կամ մյուսները կատարում են ակտիվ հյուրի դեր՝ ներգրավելով ուսուցման կազմակերպմանն ու անցկացմանը։ Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից։ Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, փոխել ուսումնասիրության շրջանակները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձը ու դրա ըմբռման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը։ Ուսումնական նյութերը պետք է լինեն մատչելի, ոչ ծանրաբեռնված, որպեսզի սովորողները թեմայի ընդհանրացումների և գիտելիքների ամրապնդման ժամանակ ստանա այնքան տեղեկություն, որ չխճճվեն նյութերում։ Ինտեգրված դասի ժամանակ ցանկալի է, որ աշակերտները աշխատեն խմբերով, որտեղ նրանց հնարավորություն կընձեռվի կիսվել գաղափարներով, փոխանակել տեղեկություններ, համադրել ստացված գիտելիքները և որոշումներ կայացնել։ Այսպիսի դասերի ժամանակ հարմար է կիրառել «Մտագրոհ», «Պրիզմա», «Խմբային

	հետազոտություն», «Շրջագայություն պատկերասրահում» և այլ մեթոդներ։ Խմբային աշխատանքը շատ արդյունավետ է, քանզի ակնհայտ է, որ արագ տեմպերով փոխվող ու զարգացող աշխարհում, որտեղ տեղեկատվությունն ու գիտելիքը ձևավորում են մեր աշխարհայացքը, մարդիկ ակնհայտորեն կարիք են ունենում աշխատել խմբերով։ Հասարակական բոլոր փոփոխությունները անդրադառնում են նաև կրթական համակարգի վրա, ուստի այս մեթոդների կիրառումը նպտակ ունի սովորողների մտավոր ու զգայական կարողությունները ընդլայնել, նպաստել ինքնուրույնության և այլ հմտությունների զարգացմանը։ Խմբային աշխատանքը նպաստում է անհատի համագործակցային գործունեության ակտիվ զարգացմանը՝ դարձնելով նրան ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ։ Կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն այդ հմտություններին տիրապետելը, այլև արժևորելը և կյանքում դրանք համապատասխան իրավիճակներում կիրառելը։ Ուսուցիչը միանգամից, մի դասի ժամանակ չի կարող օգտագործել զանազան մեթոդներ։ Մեթոդի ընտրությունը պետք է բխի դասի տիպից ու կառուցվածքից, ուսումնական նյութի բովանդակությունից, աշակերտների թվաքանակից ու տարիքային առանձնահատկություններից, նրանց շահագրռվածությունից ու պատրաստվածության մակարդակից և այլն։ Նախապատրաստական աշխատանքներում ուսուցիչը որոշում է. 1. ինտեգրված դասի անցկացման դրդապատճառներն ու նպատակները 2. այն առարկայի ներգրումը, որը կօգնի հանգամանալից քննելու հուզող թեման, հասկացությունը կամ գաղափարը 3. ինտեգրման ձևը

4. ինտեգրման մեթոդը

5. միավորվող նյութերի միջև կապերի բնույթը

6. նյութի ներկայացման միջոցները

7. առարկաների միջև առաջատարի և երկրորդականի առանձնացումը

8. դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև

9. սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները

10. առանցքային թեման, հասկացությունը, որի շուրջ կառուցվելու է դասը

11. գնահատման ձևերը

Ինտեգրման դեպքում հավասարապես ներգրավում են առարկաները՝ գերակայությունը տալով մեկ առարկային, իսկ մյուսները դառնում են օժանդակող առարկա։ Կազմվում է դասի պլանը, որոշվում է դասի տևողությունը (45 րոպե, 90 րոպե): Ինտեգրված դասի արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը դասի ճիշտ պլանավորումն է, որի մեջ, ըստ չափորոշչային եռամակարդակ պահանջների, պետք է ներառվի նաև գնահատման համակարգը։

Ուսուցիչը պետք է պարզ և հստակ կերպով ձևակերպի դասի նպատակը՝ հավաքելով մեկ դասում միավորվող ուսումնական նյութը։ Դա արվում է համագործակցող ուսուցչի հետ։

«Աշակերտներին հիմնական գիտելիքներ տալուց և համապատասխան հմտություններ զարգացնելուց բացի՝ դպրոցները ևս մեկ այլ պարտավորություն էլ ունեն . նրանք աշակերտներին պետք է նախապատրաստեն ապրելու ժողովրդավարական հասարակարգում։ Ուսումնական ծրագրի ինտեգրումը շատ ավելին է, քանի որ ժողովրդավարական հասարակության կյանքին արդյունավետ կերպով մասնակցելու

համար անհրաժեշտ հմտություններ է զարգացնում[3]»:

Ելնելով ինտեգրված դասի տեսակից՝ ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները, զուգակցում մասնավորը ընդհանուրի հետ, շաղկապում ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից։

Տարբերակվում են է ինտեգրված ծրագրերի հետևյալ տեսակները՝

- Բազմառարկայական (multidisciplinary)
- Միջառարկայական (interdisciplinary)
- Վերառարկայական (transdisciplinary)

Բազմառարկայական մոտեցման դեպքում վերցվում է թեման, ընտրվում են այն առարկաները, որոնք անդրադառնում են տվյալ թեմային՝ դասավանդման ընթացքում ուսումնասիրելով երևույթը տարբեր գիտությունների ընկալումների տեսանկյունից։

Ուսուցիչները, առաջնորդվելով այս մոտեցմամբ, առարկաների չափորոշիչները մշակում են մի թեմայի շուրջ՝ կարևորելով տարբեր առարկաների շրջանակներում սովորողների ստացած գիտելիքները։ Այս մոտեցման դեպքում առաջատար առարկայի ուժեղ կողմերը չեն շեշտվում, քաջալերվում է գիտելիքների տարբեր բնագավառների միջև կապերի հաստատումը։

Միջառարկայական մոտեցման դեպքում ուսումնասիրվող թեման դառնում է դասավանդման առանցքը, որին տարբեր առարկաներ մատուցում են իրենց արդյունքները։ Ի տարբերություն բազմառարկայական մոտեցման՝ այս դեպքում շեշտը առանձին առարկաների թեմաներից տեղափոխվում է դեպի այդ առարկաների համար ընդհանրական թեմաները և կենտրոնանում առարկաների ընդհանրությունների վրա։

[3] Մ. Դավթյան, Ք. Գրիգորյան, Ա. Արնաուդյան, Ա. Զոհրաբյան, Գ. Հովհաննիսյան, Ի. Օհանովա, Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Երևան, 2007, էջ 64:

	Վերառարկայական մոտեցման դեպքում թեման դուրս է գալիս առարկաների սահմաններից՝ լիովին ջնջելով առանձին առարկաների սահմանները։ Նման ինտեգրում է տեղի ունենում, օրինակ, նախագծային ուսումնառության դեպքում, երբ սովորողները հետապնդում են կոնկրետ խնդիր։ Ուսուցիչները ուսումնական ծրագիրը մշակում են աշակերտների հարցերի և հետաքրքրությունների հիման վրա։
Արդյունքները	Արդյունքում՝ ապահովելով թվարկած միջոցները ,այս ոլորտում շուտով կունենանք մեծ հաջողություն։
Եզրակացությունները	Այս թեման ուսումնասիրելիս մենք հանգեցինք այն եզրակացությանը, որ ինտեգրված ուսումնական ծրագիրը շատ արդյունավետ է ուսումնառությունն իրականացնելիս։ Այն ուսուցիչներին հնարավորություն կընձեռի անընդհատ կատարելագործվել՝ փնտրելով նոր գաղափարներ ու մոտեցումներ, կհասցնի նրանց նոր որակական մակարդակի։ Աշակերտներին ծրագիրը կօգնի աշխարհի մասին ունենալ ոչ թե մասնատված, այլ ամբողջական պատկերացում՝ ձևավորելով միասնական մոտեցում երևույթի ընկալման, գիտակցման ու յուրացման հանդեպ։ Այսպիսի դասերը, որպես կանոն, շատ հետաքրքիր և ուսուցանող են, տպավորիչ, ուստի օգնում են ավելի արագ և դյուրին սերտել թեմաները։
Հաշվետվության կցված նյութեր(ըստ	Վերլուծություն Կրթությունը պետք է՝ պատրաստի լայն մտահորիզոնով

ցանկության) • Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ, վերլուծություններ և այլն) • Նկարներ	քաղաքացու, որն օժտված լինի յուրացված գիտելիքները համակարգելու և ըստ անհրաժեշտության դրանք կիրառելու կարողությամբ, միաժամանակ չվախենալ դժվարություններից և պատրաստ լինի ստացած գիտելիքները օգտագործել ծառացած խոչընդոտները հաղթահարելու նպատակով: Այդ գործընթացը պետք է սկսել կրթության առաջին աստիճանից՝տարրական դասարաններից, որը սովորողին հնարավորություն կընձեռի պահպանել երևույթների ամբողջականությունը, բազմաշերտությունը, համակարգվածությունն, ու զգայականությունը: Ուստի հենց տարրական դպրոցում երեխան պիտի ունենա համակարգված և ամբողջական ընկալման բնության և նրա երևույթների վերաբերյալ: Հետևաբար անհրաժեշտ է, որ նա առարկան և երևույթները քննի տարբեր կողմերից՝ զգայական, գեղարվեստական, գիտական և այլն: Այս ճանապարհն ընտրելու դեպքում սովորողն զբաղվում է ստեղծագործական աշխատանքով: Աշակերտը սովորում է համակարգել ստացած տեղեկատվությունը, որն էլ անհրաժեշտ է հետագայում ավելի բարձր կարգի մտածողության անցնելու համար:

Հավելված

Ինտեգրված դասընթաց

Առաջնային առարկա՝ Հայ գրականություն

Երկրորդային առարկա՝ Հայոց պատմություն

Դասի տիպը՝ նյութի ամփոփում և գիտելիքների ամրապնդում

Դասի տևողությունը՝ 90 րոպե

Ամսաթիվ		Նշումների համար

Դասարան	10-րդ	Անհատական և մշակութային արժեհամակարգ- Էպոսի դերը ազգային արժեհամակարգի դրսևորման և մշակութային արժեքների պահպանման գործում Ժամանակ և տարածություն- Ազգային արժեքների ընկալումը ժամանակի և տարածության համատեքստում Անհատներ և հարաբերություններ- Անհատի գործի արժևորման քննություն
Դասավանդող ուսուցիչներ	Աիդա Հովհաննիսյան,Արմինե Ժամկոցյան	
Առարկա	Հայ գրականություն, Հայոց պատմություն	
Թեման	«Սասնա ծռեր» դյուցազներգությունը - (Ուսումնասիրվում է «Հայ գրականություն» առարկայի շրջանակներում) Արաբական արշավանքները Հայաստանում -(Ուսումնասիրվում է «Հայոց պատմություն» առարկայի շրջանակներում)	
Հիմնական հասկացություն	1. Ստեղծարարություն, 2. ինքնություն	
Ենթահասկացություն	1. Հետազոտում, նախագիծ 2 . Վերաբերմունք, արժևորում, դիրքորոշում	
Խաչվող կամ ընդհանրական հասկացություն	Անհատական և մշակութային արժեհամակարգ Ժամանակ և տարածություն Անհատներ և հարաբերություններ	
Միջառարկայական կապեր	Կերպարվեստ, Աշխարհագրություն, Հայոց լեզու, Երաժշտություն	
Նպատակներ	• Ուսումնական նյութի բազմաշերտ ընկալում, սովորողների գիտելիքների, փորձառնությունների և հմտությունների համատեղում, գիտական աշխարհայացքի	

	ձևավորում • Աշակերտների մեջ զարգացնել դպրոցական տարբեր առարկաների միջև կապ տեսնելու և այդ կապը գործնականում օգտագործելու կարողություններ ու հմտություններ Ակադեմիական՝ • Ճանաչել մեր ինքնության ակունքները • Արժևորի ազգային արժեքների պատմական, քաղաքական և մշակութային նշանակությունը • Ստեղծագործությունը դիտարկել որպես մեր ժողովրդի գոյատևման, զարգացման և առաջընթացի նախապայման Աշակերտները պետք է • Իմանան և կարողանան հստակ տարորոշել արաբական արշավանքների ընդգրկման ժամանակահատվածը, գիտակցեն հայ ժողովրդի կյանքում դրա սոցիալ-քաղաքական և տնտեսական հետևանքները՝ կապելով էպոսի հետ Կարողանան՝ Արտահայտել սեփական տեսակետը նյութի բովանդակության շուրջ	

	Սովորողի անձի զարգացում • Դրսևորի երևակայություն և ստեղծարարություն։ • Արժևորի հայ գրականության դերը հայ ժողովրդի ինքնության պահպանման գործում։ • Գիտակցի, որ ինքը պատմամշակութային արժեքների ժառանգորդն է՝ դրսևորելով պատասխանատու վերաբերմունք դրանց պահպանման, զարգացման և արժևորման գործում։	
Ձևավորվող Կարողունակություն	Լեզվական գրագիտություն Ինքնաճանաչողական և սոցիալական հարաբերությունների Տնտեսական	
Վերջարդյունք(ներ)	Դրսևորի քննական մտածողություն, վերլուծի հասանելի տեղեկությունը, գնահատի փաստարկները, հայտնի սեփական տեսակետը։	
Անհրաժեշտ նյութեր	«Սասունցի Դավիթ» էպոսի բնագիրը, նկարներ, բջջայիններ, պաստառ	
Կիրառվող մեթոդներ	«Անակնկալ հարցադրում» «Խճանկար» «10 րոպեանոց շարադրանք» «Հարց ու պատասխան»	
Ժամանակ	ընթացքը	
7 րոպե	Խթանում	

	Խթանման փուլում էլեկտրոնային գրատախտակի կիրառմամբ աշակերտները կդիտեն և կլսեն էպոսի երգվող հատվածներից https://www.youtube.com/watch?v=-IV9P0WbzWg (5 րոպե երգի ունկնդրում) Կօգտագործվի «Անակնկալ հարցադրում» մեթոդը պարզելու համար՝ երեխաները գուշակո՞ւմ են, թե որ հատվածն է երգվում, թե՝ ոչ (երկու րոպե):	
40 րոպե	Իմաստավորում Կիրառել «Խճանկար» մեթոդը։ 1 . Դասարանը բաժանել երկու խմբի՝ պատմաբաններ և գրականագետներ՝ տալով համապատասխան հանձնարարություններ 2. Խմբերի աշակերտների միջև կատարել փոփոխություն, որի ընթացքում տեղի կունենա գիտելիքների փոխանցում, հավաքագրած նյութերի ամփոփում։ 3. Յուրաքանչյուր խմբից մեկ բանախոս հակիրճ կներկայացնի իրենց խմբի կատարած հետազոտման արդյունքները։	
40 րոպե	Կշռադատում **learningapps** ծրագրի միջոցով ստուգել երեխաները ընդհանուր իմացությունը, ինչպես նաև հասկանալ, թե նախորդ	

	փուլում հանձնարարված նյութը որքանո՞վ է յուրացվել: (15 րոպե) https://learningapps.org/display?v=pppc6wfz321 **10** րոպեանոց շարադրանք, «Որքանո՞վ է թեման արդիական», «Ի՞նչ տվեց մեզ էպոսը» Աշակերտները ցանկությամբ ընտրում են այն թեման, որը հոգեհարազատ է: Ներկայացնում են շարադրանքը: (15 րոպե) Աշակերտները կներկայացնեն իրենց կազմած բացատրական բառարանը, որը կկազմեն էպոսը կարդալու ընթացքում: (10 րոպե)	
2 րոպե	Անդրադարձ, Ի՞նչ արեցինք, ինչո՞ւ և ի՞նչ նոր բան իմացար: Ի՞նչը քեզ զարմացրեց: Ի՞նչ կցանկանայիր փոխել:	
1 րոպե	Տնային հանձնարարություն Կազմել Սասնա հերոսների տոհմածառը: Գրել շարադրություն, «Ինչպե՞ս ազատել Փոքր Միհերին	

Ծրագրի տիրույթը: Աշակերտները ընթերցել են բնագիրը, որը բավականաչափ նյութ կտրամադրի թեմաների ուսուցումը գործնականորեն կազմակերպելուն:

Ծրագրի շարունակականությունը։ Սովորողները կուսումնասիրեն այլ ժողովուրդների էպոսները և կկատարեն համեմատական վերլուծություն (Էպոսի ազգի դիմագիծն է)։

Դասի համառոտ նկարագրությունը

Ինտեգրված դասի նախապատրաստական աշխատանքները կատարվել են ամբողջ շաբաթվա ընթացքում։ Երկու ուսուցիչները, իրենց առարկաների տիրույթում, հանգամանալից բացատրել են թեման՝ նախապատրաստելով ինտեգրման դասին։

Քանզի դասարանում աշակերտների թիվը 7-ն է, ապա հարկ չենք համարում ներկա-բացական անել։

1. Դասը կսկսենք «Սասնա ծռեր» էպոսի ավանդական երգերը ունկնդրելով՝ «Կայթ» նվագախմբի կատարմամբ։

Նպատակը՝

- ստուգել, թե աշակերտները կարողանո՞ւմ են կռահել, թե որ հատվածներն են երգվում։
- քանզի երգը հուզական ներաշխարհի վրա է ազդում, ապա այն կօգնի դասին լիովին ներգրավվել

2. Նախապես կպատրաստենք հարցեր, որոնք կգրվեն թղթերի վրա։ Երգը ունկնդրելուց հետո դրանք կբաժանվեն աշակերտներին։ Յուրաքանչյուրը կկարդա իրեն բաժին հասած անակնկալ հարցը և կպատասխանի դրան։

Իմաստի ընկալման փուլում կիրառել «Խճանկար» մեթոդը՝ դասարանը բաժանելով երկու մասի՝ պատմաբաններ և գրականագետներ։ Պատմաբաններին կտրամադրվեն նյութեր արաբական արշավանքների մասին, իսկ գրականագետներին նյութեր էպոսի մասին։ Ամբողջ ընթացքում պետք է հետևել աշակերտներին՝ հարկ եղած դեպքում ուղղորդելով և օգնելով նրանց (Յուրաքանչյուր ուսուցիչ ուղղորդում է իր մասնագիտական խմբին)։

Ուսուցիչները համոզվում են, որ աշխատանքները հասնում են տրամաբանական ավարտին, և այդ ժամանակ խմբերի միջև կատարում են տեղաշարժ։ Լավագույն պատմաբանին, ում կընտրի խումբը, կտեղափոխենք գրականագետների խումբ և հակառակը։ Այդ ընթացքում տեղի կունենա գիտելիքների փոխանցում, հավաքագրած նյութերի ամփոփում։ Յուրաքանչյուր խմբից մեկ բանախոս հակիրճ կներկայացնի իրենց խմբի կատարած հետազոտման արդյունքները։ Այսպիսով ևս մեկ անգամ կվերհիշենք ու կամրապնդենք երկու առարկաներից ստացված գիտելիքները։

Կշռադատման փուլում հայոց պատմության և հայ գրականության ուսուցիչները աշակերտների գիտելիքները ստուգում են learningapps ծրագրի միջոցով։ Այդ ծրագրով նրանք նախապես կազմում են խաղ՝ ընտրելով այնպիսի առանցքային հարցեր, որոնց պատասխանները աշակերտները կգտնեն, երբ կուսումնասիրեն նախորդ փուլում տրամադրված նյութը՝ համադրելով իրենց իմացածների հետ։ Առաջադրանքը պետք է այնպես կազմված լինի, որ աշակերտները հստակ հասկանան երկու առարկաների անքակտելի կապը (Հարցերը ևս կազմվում են համատեղ)։

Աշակերտները պետք է հստակ իմանան, թե որ դարերն են ընդգրկում արաբական արշավանքները, ինչ դիմադրություններ են եղել Հայաստանում, փորձեն ինքնուրույն պրպտել և գտնել էպոսի հերոսների իրական նախատիպերին։ Երեխաները աշխատանքները կկատարեն հեռախոսներով և վերջնարդյունքը կուղարկեն ուսուցչին։

Կհանձնարարվի գրել 10 րոպեանոց շարադրանք՝ ստուգելով թեմայի գաղափարական ընկալումը։

Աշակերտները կներկայացնեն իրենց կազմած բացատրական բառարանը, որը կկազմեն էպոսը կարդալու ընթացքում։

Անդրադարձի ժամանակ հարց ու պատասխանի միջոցով աշակերտները կպատասխանեն հետևյալ հարցերին՝

Ի՞նչ արեցինք, ինչո՞ւ, ի՞նչ նոր բան իմացար, ի՞նչը քեզ զարմացրեց, ի՞նչ կցանկանայիր փոխել։

Ուսուցիչները, օգտվելով էլեկտրոնային գրատախտակից, կամփոփեն նյութը՝ ցույց տալով քարտեզներ ու բացատրելով արշավանքների ընդգրկման աշխարհագրությունը և հետևանքները: Կցուցադրեն նկարներ՝ ևս մեկ անգամ շեշտելով ու կարևորելով ազատագրական պայքարի գաղափարը՝ օրինակ բերելով էպոսի հերոսներին: Աշակերտները ցուցադրված նկարները կհամապատասխանեցնեն էպոսի ճյուղերին:

Նկար 1

Նկար 2

Նկար 3

Նկար 4

Երեխաները կներկայացնեն իրենց կազմած բացատրական բառարանը։ Կխոսեն Սասունի բարբառի առանձնահատկությունների մասին։

Գնահատման տեսակը՝ ձևավորող։ learningapps ծրագրիրը հնարավորություն է տալիս գնահատել աշակերտների կատարած աշխատանքները՝ տալով ձևավորող գնահատական։

Տնային հանձնարարությունը տալիս բացատրել աշխատելու սկզբունքները։

Վերջնարդյունքներ՝

- Աշակերտները կզարգացնեն քննադատական վերլուծության ու ստեղծագործական մտածողության կարողությունները
- Կվերլուծեն հասանելի տեղեկությունը, կգնահատեն փաստարկները
- Կհայտնեն սեփական տեսակետ՝ դրսևորելով բարեկրթություն և զսպվածություն
- Կգնահատեն երկի բովանդակություն իմացությունը և գաղափարական ըմբռնումը որպես ինքնաճանաչողական, սեփական անձի, աշխարհայացքի ձևավորման և ազգային մշակութային արժեքների պահպանման, հետագա զարգացման կարևոր պայման։
- Կգիտակցեն, որ իրենք պատմամշակութային արժեքների ժառանգորդն են՝ դրսևորելով պատասխանատու վերաբերմունք դրանց պահպանման, զարգացման, արժևորման գոնծում։

Օգտագործված գրականության ցանկ

1. Սասունցի Դավիթ, Համահավաք բնագիր, Երևան, 1981:
2. Մ. Դավթյան, Ք. Գրիգորյան, Ա. Արնաուդյան, Ա. Զոհրաբյան, Գ. Հովհաննիսյան, Ի. Օհանովա, Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Երևան, 2007:
3. https://historyancient.ru/hy/the-chechen-war/pochemu-byli-vvedeny-integrirovannye-uroki-integrirovannye/ 26. 11. 2021, 18: 23:
4. https://hy.wikipedia.org/wiki/%D4%BB%D5%B6%D5%BF%D5%A5%D5%A3%D6%80%D5%BE%D5%A1%D5%AE_%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6 26. 11. 2021, 18: 24: